



**Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ի աշխատակիցներն ամանորյա ուրախություն պարզնեցին Տավուշի մարզի սահմանամերձ շրջանների երեխաներին**

Մամուլի հաղորդագրություն

25 դեկտեմբեր, Երևան – Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ն (HSBC Հայաստան) ու Հայ օգնության ֆոնդը (ՀՕՖ) այս տարի ևս միավորեցին ջանքերը՝ իրականացնելու Տավուշի մարզի սահմանամերձ Պառավաքար գյուղի և Բերդի թիվ 2 ու թիվ 3 մանկապարտեզների փոքրիկների Ամանորյա ցանկությունները: Բանկի աշխատակիցները միավորվել ու գնել էին այն նվերները, որոնք երեխաները խնդրել էին Ձմեռ պապին ուղղված իրենց նամակներում:

«1996 թվականից HSBC Հայաստանը մշտապես ներգրավված է եղել համայնքների կայուն զարգացմանը նպաստող ծրագրերում: «Խաղալիքների հավաք» նախաձեռնությունը համայնքներին ուղղված աջակցության ծրագիր է, որին մեր թիմը պատրաստակամորեն աջակցում է: Իսկապես հաճելի է տեսնել երեխաների ուրախությունն ու խանդավառությունը, երբ նրանք բացում են իրենց նվերները, մեզ հետ կիսում են իրենց ուրախությունն ու հրճվանքը»,- ասում է HSBC Հայաստանի գլխավոր գործադիր տնօրեն՝ Փոլ Էդգարը:

HSBC-ի՝ 2007-ից իրականացվող Հնարավորություն երիտասարդներին ծրագրի շրջանակում կազմակերպված «Խաղալիքների հավաք» (Toy Drive) նախաձեռնությունը ամանորյա հրաշք է նվիրել երեխաներին ողջ աշխարհում:

Բանկն աշխատում է բարեգործական ծրագրեր իրականացնող գործընկեր կազմակերպությունների հետ խոցելի համայնքների կայուն զարգացմանը նպաստելու համար: Ամեն տարի՝ դեկտեմբերին, HSBC Հայաստանի աշխատակիցները խաղալիքներ են գնում և դեկտեմբերի 25-ի նախօրեին բարեգործական կազմակերպությունների միջոցով դրանք առաքում թիրախային համայնքներ:

Ծրագրի շրջանակում HSBC Հայաստանն արդեն իսկ երեք տարի համագործակցում է Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) հետ, որն իրականացնում է «Աղքատության հաղթահարումը Տավուշի մարզում» համապարփակ ծրագիրը Բերդում և հարակից 16 համայնքներում:

Նախորդ երկու տարիներին HSBC Հայաստանը «Խաղալիքների հավաք» նախաձեռնության շրջանակում այցելել է նաև Վերին Ծաղկավան, Չինչին, Նավուր, Տավուշ, Վերին Կարմիրաղբյուր, Ներքին Կարմիրաղբյուր, Նորաշեն, Արծվաբերդ, Այգեձոր, Այգեպար, Սովսես, Չորաթան, Չինարի, Իծաքար, Վարազավան գյուղերի փոքրիկներին: